ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԽՐԻՄՅԱՆ

(1820—1907)

ԺԹ դարի հայ ազգային-կրոնական կյանքի ամենամեծ դեմքն է Մկրտիչ Խրիմյանը:

Նա ծնվել է Վանում՝ 1820 թ. ապրիլի 4-ին: Նրա հայրը վաճառական էր, որը զանազան տեսակի գործվածքներ էր արտահանում Խրիմ. այս պատճառով էլ ստացվել է Խրիմյան ազգանունը: Մանուկ Մկրտիչը մեծացավ ազատ բնության ծոցում, Այգեստանի բարձրաբերձ ծառերի, այգիների և առուների մոտ, իր հորեղբայր Խաչատուրի խնամքի տակ: Այս անձը վերին աստիճանի առաքինի, բարեպաշտ և ողորմած մարդ էր, արհեստով ոստայնանկ, որ գիտեր նաև կարդալ ու գրել, հմուտ էր Ս. Գրքին և եկեղեցական ժամասացության: Մկրտիչը մի կողմից սովորում էր ոստայնանկություն, մյուս կողմից կարդալ ու գրել. նրա մեջ մի կողմից բուռն դրավ կրոնական բարեպաշտությունը, ողորմածությունը, մյուս կողմից՝ բնության սերը: Մկրտչի մեծ եղբայրը այգեպան էր, և ազատ ժամերում Մկրտիչն էլ նրա մոտ սովորում էր գործնական այգեպանություն: Երբ մեծացավ, պատանի դարձավ, նա սկսեց շարունակ ման գալ այն վանքերը, ուխտավայրերն ու հայրենական ավերակները, որոնցով լի է Վասպուրականի ամեն մի անկյունը. մի ժամանակ մնաց Լիմ և Կտուց անապատներում, ուր սովորեց գրաբար լեզուն և հին հայոց եկեղեցական դրականությունը: Այդ ժամանակից Մկրտիչի մեջ միտք ծագեց մտնելու կրոնական ասպարեզը, բայց ծնողները չթողեցին և նրան ամուսնացրին:

Այդ միջոցին տաճկաց պետությունը ուզում էր գավառացի հայերից զինվոր առնել: Երիտասարդ Մկրտիչը զինվորագրությունից ազատվելու համար դուրս եկավ երկրից. նա գնաց Պարսկաստան, տեսավ Ուրմիա, Սալմաստ, Խոյ, անցավ Թեհրանը, մտավ Գողթն գավառը, Նախիջևան, Երևան, Էջմիածին, ման եկավ Անիի ավերակներում և այսպես Հյուսիսային Հայաստանի զանազան կողմերը շրջագայելուց հետո անցավ Պոլիս:

Զուրկ լինելով դրամական միջոցներից՝ ապրուստ գտնելու նպատակով նա սկսեց Պոլսում կոշկակարությամբ պարապել. միևնույն ժամանակ առաջ էր տանում իր մտավոր դաստիարակության գործը: Նա արդեն այնքան հմտացել էր գրաբար հայերեն լեզվին, որ սկսել էր գրել ընդարձակ բանաստեղծություններ: Այս ժամանակ Բագրատունին արել էր հայկական չափի գյուտը. Խրիմյանը ոգևորվում է այդ չափով և գրում է Բագրատունուն նվիրված մի գովեստ՝ հայկական չափով, որը հրատարակվում է «Բազմավեպ»-ի մեջ (1849 թ.): Դա լինում է Խրիմյանի առաջին գրական վաստակը:

Շնորհիվ իր գիտության, հեզահամբույր բնավորության Խրիմյանը շուտով ձեռք է բերում մեծ հաջողություն: Նա մուտք է գործում ազնվական ընտանիքների մեջ՝ իբրև ուսուցիչ և բարեկամ, կարգվում է ուսուցիչ Պոլսի թաղային դպրոցներում, վայելում է հատկապես Օտյան ընտանիքի սերը. պետական ու ազգային նշանավոր գործիչ Գրիգոր Օտյանը դառնում է նրա սիրելի բարեկամն ու աջակից պաշտպանը:

1850 թվին Խրիմյանը հրատարակում է իր մեծ բանաստեղծական երկը՝ «Հրավիրակ Արարատյան»: *Դրանից հետո ուխտի գնալով Երուսաղեմ և շրջագայելով քրիստոնեական սրբավայրերը՝ հրատարակեց իր երկրորդ բանաստեղծական երկը՝* «Հրավի-

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԽՐԻՄՅԱՆ

բակ երկրին Ավետյաց» (տպ. Պոլիս 1851)։

Արիմյանի անունը արդեն հռչակված էր։

Արիմյանը իբրև բնիկ Հայաստանցի, ծնված հայ երկրի ու հայ ժողովրդի ծոցում, ավելի խոր դիտակցելով նրա կարիքները, ավելի անձնվիրությամբ նեսվեց տպարեղ։ Նա ուղարկվեց Կիլիկիա հիմնելու համար հայ դպրոցներ։ Բայց Սսի մէջ չկարողանալով հաշտվել կաթողիկոսի հետ, կարճ ժամանակից հետո ստիպված եղավ վերադառնալ Պոլիս։ Այստեղ Հասունյանց կռիվների առթիվ հրատարակեց անստորագիր մի տետրակ՝ «Բան առ Մխիթարյան միաբանություն» (Պոլիս, 1853), որի մեջ դատապարտում էր պապականության փառամոլությունը։ Դիչ հետո գնաց Վան, ուր մեռած գտավ իր կնոջը և իր միակ աղջկանը։ Ընտանեկան այս դժբախտությունը դրդեց Արիմյանին բ.ստործելու իր հին ցանկությունը և օծվելով վարդապետ՝ դարձավ Վարագա վանքի միաբան։

Արիմյանի նպատակն էր վանքում հիմնել դպրոց և տպարան, հավաքել այդտեղ հայ ժողովրդի զավակներին և նոր՝ եվրոպական գիտության լուսով լուսավորելով նրանց՝ ուղարկել Հայաստանի զանազան կողմերը՝ ազգային կրթությունը, մոռացված լեզուն ամենուրեք տարածելու համար։ Միևնույն ժամանակ նա դուրս եկավ կռվելու ժողովրդի շահերի համար՝ վաշխառու ջոջերի, կաշառակեր և անարդար պաշտոնյաների և միջնադարյան խավարամիտ հոգևորականների դեմ։ Իր գենքը քարոզն էր, կենդանի խոսքը եկեղեցու բեմից։ Արիմյանը ճարտասան էր, բայց ոչ այն ճարտասաններից, որոնց աղդեցությունը լեզվի գեղեցկության, ճոխության կամ պերճության մեջ է։ Նա խոսում էր պարզ ու հասարակ լեզվով, ժողովրդի հասարակ կյանքից, նրա ըմբռնած ու նրան մատչելի օրինակներով ու առակներով։ Նրա քարոզների մեջ չկային հին սխոլաստիկ ոդին, Ս. Գրքի հնադարյան բացատրությունները, առասածաբանական նրբություններ, այլ մաքուր բարոյականը, աղգային հերոսների կյանքը, առօրյա կյանքը շոշափող հարցեր, կրթական ու տնտեսական խնդիրներ։ Ժողովուրդը սիրեց նրան իբրև իր հարազատի։

Հասկանալի է, որ ազատախոհ վարդապետի դեմ զենք առնեին ամբողջ հին սերունդը, ջոջերը, կեղեքիչները և խավար հոգևորականությունը։ Արիմյանը նորից դնաց Պոլիս իր ծրագիրը հաջող հիմքերի վրա դնելու համար։ Այստեղ նա ձեռք բերելով ազատամիտ կուսակցության պաշտպանությունը, կազմեց իրեն աջակից, «պաշտպանողական ընկերությունը», դնեց մամուլ և հենց Պոլսում սկսեց հրատարակել «Արծիվ Վասպուրականի» ամսաթերթը (1855 թ.), որից հետո անցավ Վան և պատրիարքական կոնդակով հաստատվեց Վարագա վանքի վանահայր։

Արիմյանը Վարագա վանքը դարձրեց հայ ժողովրդի լուսավորության առաջին կենտրոնը. այստեղ նա հիմնեց ժառանգավորաց դպրոց, որտեղ առաջին անգամ ուսումը դրված էր եվրոպական ուղղությամբ, ավանդվում էին գիտություններ և հայոց պատմություն. նա հիմնեց նաև տպարան, այստեղ վերսկսեց «Արծիվ Վասպուրականի» ամսաթերթը, հետո բացավ դրադարան և թանգարան։

Արիմյանն իր հիմնարկությունների նյութականը ապահովելու նպատակով նորից ստիպվեց գնալ Պոլիս, ապա անցավ Կովկաս և Թիֆլիսում, Գանձակում ու Շուշում հանգանակություն անելով եկավ Երևան, Նախիջևան, Աղուլիս և Պարսկահայաստանի վրայով վերադարձավ Վարագ։ Այնուհետև Տարոնի ժողովրդի ցանկության համաձայն Արիմյանը ընտրվում է առաջնորդ Տարոնի և վանահայր Ս. Կարապետի վանքի, իր վրա պահելով նաև Վարագի վանահայրությունը։ Արիմյանը Վարագը հանձնելով իր կարող աշակերտներին վերցրեց իր հետ մի մամուլ, տառեր և իր մի քանի ընդունակ աշակերտների հետ անցավ Տարոն։ Այստեղ Ս. Կարապետի հրաչակավոր վանքի մեջ բացավ երկրորդ տպարանը, ժառանգավորաց դպրոց, հիմնեց

«Արծվիկ Տարոնոյ» կիսամսյա թերթը, որի խմբագրությունը հանձնեց իր արժանավոր աշակերտ Գարեգին վրդ. Սրվանձտյանին: Խրիմյանի աշակերտներից ուրիշները՝ ոմանք ուսուցիչ, ոմանք վարդապետ՝ ցրվեցին Հայաստանի զանազան կողմերը բանալու նորանոր դպրոցներ, ժողովուրդը կրթելու և դաստիարակելու: Խրիմյանը եղավ այդ բոլորի հայրը և ժողովուրդը տվեց նրան «Հայոց Հայրիկ» սիրելի տիտղոսը, որը Խրիմյանը գուրգուրանքով պահեց մինչև վերջ:

Տարոնում լուսավորության գործը ավելի մեծ խոչընդոտների հանդիպեց: Մի քանի վանականներ, որոնք այլևս զրկված էին վանքի եկամուտները ազատորեն վայելելու իրավունքից, մի քանի վաշխառուներ ու կեղեքիչներ, որոնց ախորժակները այլևս սանձված էին, սկսեցին դավադրություն սարքել նրա դեմ: Նրանք դիմում էին մերթ ազգային իշխանության՝ պահանջելով պաշտոնանկ անել նորամիտ վարդապետին, մերթ դիմում էին պետության՝ ամբաստանելով նրան իբրև ապստամբություն քարոզող. մինչև անգամ նրանք զինեցին քրդական ամբոխը և վանքի դռները փակելով՝ արյունահեղ կռվի դուրս եկան նրա դեմ: Խրիմյանը ստիպված էր իր թշնամիներից ազատվելու համար քանիցս անձամբ գնալ Պոլիս, որտեղ կատարվեց քննություն, Խրիմյանը արդարացավ և վանականները աքսորվեցին: Այդ միջոցին էր, որ Խրիմյանը անցավ Էջմիածին և օծվեց եպիսկոպոս: Բայց հազիվ վերադարձել էր Տարոն, երբ ընտրվեց Պատրիարք Կ. Պոլսո (1869): Տարոնից մինչև Պոլիս նրա երթը մի հաղթական թափոր էր:

4 տարի մնաց Խրիմյանը պատրիարքական աթոռի վրա. այդ շրջանում իր գործն եղավ Ազգ. Սահմանադրությունը ժողովրդականացնել, առաջ քաշել ժողովրդի միջին խավը ազգային բարձր պաշտոններին, հետ մղելով ամիրականներին: Բայց նրա պատմական և ամենամեծ գործն եղավ Ազգային ժողովի քննությունների առարկա դարձնել Հայաստանի ժողովրդի հարստահարյալ վիճակը, որ առանձին տեղեկագրությամբ մատուցվեց պետության և նրա դարմանը խնդրվեց: Այսպես ծնվեց Հայոց Հարցը, որը իր այն ժամանակվա դրվածքով մնաց որպես «Հայոց Հարց»: Շատ ուշ, միայն Սովետական Իշխանության օրով հայ ժողովուրդը ստացավ իր իսկական ազատությունն ու անկախությունը:

Բայց Խրիմյանը դժգոհ մնաց Սահմանադրական այն կարգերից՝ որ այն ժամանակ տիրում էին Պոլսում: Նա առաջարկեց վերաքննել Սահմանադրությունը և զորացնել նրա մեջ այն դրությունը, որով գավառները նվազ կախում պիտի ունենային Պոլսից: Այս ձևով նա հարուցեց իր դեմ երեսփոխանների մի մասի հակառակությունը, որոնք նրան համարում էին հակասահմանադրական: Հակառակ էին նաև այն բոլոր ազնվականները՝ որոնց ի վնաս գործել էր Խրիմյանը, մոտեցնելով իրեն ժողովրդական դասը: Վերջապես Խրիմյանը ստիպվեց հրաժարվել պատրիարքությունից (1873): Այնուհետև նա ապրեց Պոլսում՝ իբրև քարոզիչ Ուսկյուտարի եկեղեցում, միևնույն ժամանակ իրար ետևից հրատարակում էր իր գրական աշխատությունները:

Ռուս-տաճկական պատերազմից հետո Հայոց Հարցը նոր կերպարանք ընդունեց: Հայոց Հարցը շնորհիվ Ներսես պատրիարքի բարձրացավ եվրոպական պետությունների դիվանը: Սան-Ստեֆանոյի մեջ 16-րդ հոդվածը գրվելուց հետո, երբ Բեռլինում գումարվեց եվրոպական վեհաժողովը, Ներսեսը մտածեց Հայոց Հարցը ներկայացնել այնտեղ և մի դարման խնդրել: Ընտրվեց Խրիմյանը, որ իր թարգման Մինաս Չերազի հետ ման պիտի գար եվրոպական մայրաքաղաքները՝ պատրաստելու համար մտքերը և հետո Բեռլինում Նար-Պեյի հետ պիտի ներկայանար վեհաժողովին: Խրիմյանը մեկնեց Պոլսից և այցելելով Հռոմ, Վիեննա, Փարիզ, Լոնդոն, մեջտեղ դրավ հայ ժողովրդի ցավը և խնդրեց պետությունների աջակցությունը. այնուհետև Բեռլինում Նար-Պեյի հետ վեհաժողովին մատուցեց մի հուշագիր, որով խնդ-

րում էին Հայոց համար տեղական ինքնավարություն: Վեհաժողովը տվեց հայտնի 61–րդ հոդվածը (1878):

Հայերը իրենց ակնկալության մեջ հուսախաբ գտնվեցին. ամենից առաջ Հայրիկը Ցուսկիտարի եկեղեցում Բեռլինից վերադառնալուց հետո խոսեց իր նշանավոր քարոզը, որի մեջ Հարիսայի և երկաթե շերեփի օրինակով քարոզում էր զենք առնել բռնության դեմ՝ իր իրավունքը հզորների առաջ հարգելի դարձնելու համար:

Խրիմյանը Պոլսում երկար չմնաց. նա նորից դարձավ Վարագ իր սիրած ժողովրդի ծոցը. այստեղ նա հաճույքով տեսավ իր ցանած սերմերի արդասիքը. ամեն կողմ դպրոցներ էին բացվել, մի ուսումնատենչ սերունդ էր առաջ եկել, զարգացել էր ժողովրդական գիտակցությունը և Խրիմյանը նորից շարժեց Վարագի մամուլը՝ իր հին ու նոր աշակերտների սովոր խմբի հետ:

Այս անգամ մի մեծ պատուհաս սպառնում էր Վանին: Դա սովն էր, պատերազմի սև արդյունքը, որին զոհ պիտի գնար ամբողջ Վասպուրականը: Պոլսում կազմեց սովյալներին օգնող հանձնաժողով: Աշխարհի ամեն կողմից ցրված հայերը արձագանք տվին Խրիմյանի կոչերին և սկսեցին ուղարկել իրենց առատաձեռն նվերները: Գումարները փոխադրվում էին Հայրիկին և նա իր ձեռքով բաժանում էր առանց ազգի և կրոնի խտրության հային, տաճկին, քրդին, ասորուն և եզիդիին: Այստեղ երևաց Խրիմյանի ճշմարիտ մարդասիրության ոգին և նրանով կարողացավ սեր ու հարգանք ներշնչել քուրդ ցեղերի մեջ դեպի իր ազգը և դեպի իր անձը մասնավորապես: Այս ժամանակ Խրիմյանը հղացավ Վանում երկրագործական դպրոց բանալու միտքը: Նա բերել տվեց եվրոպական գութան, երկրագործական նոր գործիքներ, հրավիրեց մասնագետ ուսուցիչներ, որոնք աշակերտներին սովորեցնում էին նոր մեթոդներով հողը մշակել:

Բայց Խրիմյանի գործունեությունը արդեն առաջ էր բերել կասկած տաճիկ կառավարության շրջաններում. նրա ներկայությունը Հայաստանում վնասակար համարվեց. սուլթանական հրամանով Խրիմյանը Պոլիս կանչվեց և հետո հայկական շարժումների հետևանքով աքսորվեց Երուսաղեմ (1890): Բայց այս աքսորը շատ երկար չտևեց. 1892 թվին Էջմիածին հավաքված համազգային ժողովը բարձր գնահատելով Խրիմյանի արժանիքներն ու ազգային գործունեությունը միաձայն ընտրեց նրան Ամենայն Հայոց կաթողիկոս:

Նորընտիր կաթողիկոսը Եվրոպայի ճամբով անցավ Էջմիածին և այցելություն տալով ռուսաց կայսեր նստեց իր գահը:

Խրիմյանը կաթողիկոսական գահի վրա չկարողացավ ունենալ այն մեծ գործունեությունը, որ ցույց էր տվել իր պատրիարքական, մանավանդ վարդապետական շրջանում: Եվ այդ այն դաժան պայմանների պատճառով, որոնցով կաշկանդել էր նրան ցարական բռնակալ պետությունը, մանավանդ Նիկոլայան չարակամ իշխանությունը: Դառն սրտով տեսավ Խրիմյանը տաճկահայերի կոտորածը, կովկասյան բռնությունները, եկեղեցական կալվածների գրավումը, թուրք—հայկական ընդհարումները, որոնց բարձման համար իր դիմումները Ռուսաստան և Եվրոպա մեծ մասամբ անօգուտ անցան:

Խրիմյանը ԺԹ դարի հայ հոգևորականության մեծագույն դեմքն է. նրան քաջ ծանոթ էին բոլոր այն իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել ԺԹ դարի հայ հասարակական կյանքում: Այդ իրադարձություններին նա ոչ միայն սոսկ ականատես է եղել, այլև գործոն մասնակից: Նրան ծանոթ էր ողջ հասարակական կյանքը շինականի անշուք խրճիթից մինչև եվրոպական ճոխ պալատները: Իր ժամանակի հասարակական կյանքի բոլոր փայլփլումների մեջ Խրիմյանը հանդիսացել է միշտ ճշմարիտ քրիստոնյայի, ճշմարիտ հայրենասերի և ճշմարիտ ժողովրդական մարդու տիպարը: Այս պատկերով դտնում ենք նրան իր բոլոր դրական գործերի մեջ:

Ակադեմիկոս Հ. ԱՃԱՌՅԱՆ